Մրցույթ՝ ՀՀ «Մեծավանի N1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (1 դրույքաչափ), ֆիզիկայի (18 դասաժամ), երաժշտության (3.5 դասաժամ), գերմաներենի (19 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (32 դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ), ռուսաց լեզվի (16 դասաժամ), կենսաբանության (12 դասաժամ), ֆիզկուլտուրայի (23 դասաժամ), բնագիտության (2 դասաժամ), դասվարի (17 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),

- մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թ. հունիսի 12-ից մինչև 2025 թվականի հունիսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի հունիսի 30 -ին ժամը 14:00-ին, ՀՀ Լոռու մարզի Մեծավանի N1 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Մեծավան, Զ. Անդրանիկի 46: Տեղեկությունների համար զանգահարել (077) 264725 հեռախոսահամարով: